ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

18 ապրիլի 2026թ. **N 44-Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ԳՅՈՒՄՐՈՒ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գյումրու առաջընթաց» քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության Կենտրոնական ընտրական հանձնաժողովում 14.04.2026թ. ստացված դիմումը (կից փաստաթղթերով)՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով դիտորդներ հավատարմագրելու վերաբերյալ, և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 21-ի N 3-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. «Գյումրու առաջընթաց» քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության Կենտրոնական ընտրական հանձնաժողովում 14.04. 2026թ. ստացված դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ի ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով դիտորդներ հավատարմագրելու վերաբերյալ, բավարարել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

2026 թվականի ապրիլի 18
ք. Երևան